



ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

55 East 59th Street, New York, NY 10022-1112 U.S.A. T: 212 319-6383 • F: 212 319-6507/08 • E: agbuny@agbu.org • W: www.agbu.org

**Յայտարարութիւն Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովին Կողմէ
Հայաստանի եւ Թուրքիոյ Կողմէ Քննարկուելու Համար Հրապարակուած
Նախագիծերուն Առիթով**

31 Օգոստոս 2009ին, Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութիւնը, Զուիցերիոյ Արտաքին Գործոց Դաշնակցային Բաժանմունքին եւ Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան հետ համատեղ, հրապարակեց Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման եւ զոյգ երկիրներու միջեւ փոխ-յարաբերութիւններու զարգացման նախագիծերուն վերաբերեալ երկու վաւերագրեր, որոնք կը մանրամասնեն երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու բնականոնացումի, հիւպատոսական ներկայացուցչութիւններու հաստատման եւ ներկայ սահմաններու բացման ուղղութեամբ առնուելիք նախաքայլերը:

Հայ եւ թուրք ժողովուրդներու յարաբերութեանց եւ նորանկախ Հայաստանի Հանրապետութեան համար պատմականօրէն յատկանշական իրադարձութիւն մըն է այս, որ ծանրակշիռ անդրադարձներ պիտի ունենայ Հայաստանի Հանրապետութեան եւ աշխարհաստարած հայութեան համար: Մեր ժողովուրդը, հայրենիքի թէ սփիւռքի մէջ, արդէն սպասումով եւ մտահոգութեամբ կը հետեւէր Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացումին շուրջ ժամանակէ մը ի վեր ընթացող բանակցութիւններու արձագանգներուն:

Կը գիտակցինք թէ Հայաստանի դիմագրաւած աշխարհաքաղաքական մարտահրաւերները կը մղեն Հայաստանի պետութիւնը որ գործնապաշտ քաղաքականութեամբ մը դրական կեցուածք եւ անկեղծ տրամադրութիւն ցուցաբերէ Թուրքիոյ հետ բանակցութիւններ նախաձեռնելու ուղղութեամբ: Այդ կողմնորոշումը կը բխի ազգային ապահովութեան պահանջներէն, նաեւ երկրի տնտեսութեան զարգացման համար կենսական նշանակութիւն ունեցող հաղորդակցութեան միջոցներու ապահովումին եւ շրջանային քաղաքական թէ տնտեսական համագործակցութեան ծրագիրներուն մաս կազմելու մտահոգութիւններէն: Այդ բանական քաղաքականութիւնը սակայն չի կրնար կենսագործուիլ ի հաշիւ հայ ժողովուրդի պատմական անժամանցելի իրաւունքներուն: Կը հաւատանք թէ Հայաստանի պաշտօնական ղեկավար մարմինները պետութեան տնօրինողները եւ միաժամանակ անոր ապագան ապահովողներն են: Հետեւաբար երբ կոչուած են դժուարին եւ հեռահաս որոշումներ առնելու, անոնք պէտք է առաջնորդուին համազգային նպատակակէտերով եւ ձգտումներով:

Հայաստան-Թուրքիա դիւանագիտական յարաբերութիւններու մշակման նախագիծերը, ուղղակի թէ անուղղակի կերպով, կ'անդրադառնան Յեղասպանութեան եւ մեր հողային պահանջներուն: Մինչ կը գիտակցինք եւ կ'ըմբռնենք Հայաստանի համար դրացի



երկիրներուն, ի շարս որոնց Թուրքիոյ հետ դիւանագիտական բնականոն յարաբերութիւններ ունենալու անհրաժեշտութիւնը, մեզի համար անժամանցելի Հայ Դատը, իր ամբողջական առումով, եւ հայութեան դէմ գործադրուած Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը, գերիվեր են դիւանագիտական ամէն նկատառումէ եւ բանակցութեան նիւթ չեն կրնար դառնալ:

Հայաստան-Թուրքիա երկխօսութեան նախաքայլը դրականօրէն ընդունուեցաւ ազգերու ընտանիքին կողմէ: Միակ ընդդիմացողը ցարդ Ատրպէյճանն էր, որ Թուրքիոյ հետ գործակցաբար կը շարունակէ Հայաստանը շրջափակել գրեթէ երկու տասնամեակներէ ի վեր:

Հայաստանի հետ մօտեցումի նախաձեռնութիւնը կասեցնելու համար, Թուրքիա առաջ մղած էր Արցախի վերաբերեալ բանակցութիւններու պատրուակը: Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացումի ներկայ նախաձեռնութիւնը պէտք չէ պայմանաւորուի Արցախի հիմնահարցին շուրջ տարուող բանակցութիւններուն գործընթացով: Արցախահայութիւնը, ժողովուրդներու ինքնորոշման սրբազան իրաւունքին նուիրագործումով, ազատօրէն ապրելու իր կամքը արտայայտած է արդէն:

Թուրքիա կը գտնուի պատմական հազուադէպ առիթի մը առջեւ: Ան պէտք է ցուցաբերէ գործակցութեան անկեղծ տրամադրութիւն: Եթէ զանազան պատճառաբանութիւններով, ան շարունակէ ձգձգումի իր քաղաքականութիւնը եւ խուսափի իր ստանձնած պարտաւորութիւններէն, պիտի արժանանայ շրջանային շահեր եւ ազդեցութիւններ ունեցող երկիրներուն կշտամբանքին, տրուած ըլլալով որ անոնք քաջալեր կը հանդիսանան Հայաստան-Թուրքիա երկխօսութեան եւ յարաբերութիւններու բնականոնացումի նախաձեռնութեան:

Երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու մշակումին ուղղութեամբ Հայաստանի ցուցաբերած դիւանագիտական այս յանդուգն նախաձեռնութիւնը երբ ընթացք ստանայ, Թուրքիան պիտի գտնուի միջազգային իր պարտաւորութիւնները կատարելու հարկադրանքին եւ պետութեանց ու միջազգային մարմիններու տուած խոստումները յարգելու ակներեւ ընտրանքին առջեւ: Եւրոպայի հետ միութեան իր ձգտումէն բխող յայտարարութիւններով, Թուրքիա ինքզինք կողմնակից կը դասէ մարդկային իրաւանց սկզբունքներու ճանաչումին եւ ժողովրդավարութեան: Ան նաեւ յանուն շրջանային կայունութեան՝ դրացի բոլոր երկիրներու հետ համագործակցելու տրամադիր կը ներկայացնէ ինքզինք: Ան միջազգային հանրային կարծիքին դիմաց հաշուետու պիտի դառնայ ցարդ չհիմնաւորուած իր յայտարարութիւններուն կապակցութեամբ:



Մենք վստահ ենք թե Հայաստանի ղեկավարներուն համար Թուրքիոյ հետ առանց նախապայմաններու դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու սկզբունքին գործնականացումը դժուար է: Կը հաւատանք թէ անոնք կը բաժնեն նաեւ պատմական անցեալին եւ ցարդ Թուրքիոյ կողմէ շարունակուող հակահայ քաղաքականութեան վերաբերեալ մեր բոլոր մտահոգութիւններն ու թրքական անկեղծութեան հանդէպ մեր կասկածները: Մենք կը գնահատենք Հայաստանի պետութեան նախաձեռնութիւնը եւ մեր աջակցութիւնը կ'ընձեռենք Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ բարի դրացնութեան ուղղութեամբ տարուող ճիգերու ուղիղ եւ արդար արդիւնաւորումին ուղղութեամբ, նախանձախնդիր հայ ժողովուրդի պատմական պահանջներուն եւ իրաւունքներուն պահպանութեան:

Իբրեւ համահայկական Միութիւն եւ տարագիր հայութեան իղձերուն եւ ձգտումներուն արտայայտիչը, Հ.Բ.Ը.Միութիւնը կը կողմնորոշուի Հայ Ժողովուրդի ծառայութեան նուիրուած աւելի քան հարիւրամեայ իր ասանդութիւնը բնորոշող ազգային քաղաքականութեան անշեղ սկզբունքներով: Միշտ զօրավիք Հայրենի ժողովուրդին եւ նուիրուած՝ հայ ազգի անձեռնմխելի իրաւունքներուն եւ պատմական, նիւթական ու մշակութային ժառանգութեան պաշտպանութեան:

Այս առթիւ կոչ կ'ուղղենք բոլորին, հայրենի պետութեան հետ համախորհուրդ եւ հայութեան բոլոր հատուածներուն միջեւ արդիւնաւոր համագործակցութեան ազնիւ ոգիով դիմագրաւելու պատմական այս պահն ու մարտահրաւերները՝ զգօնութեամբ եւ ազգային միասնականութեամբ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան
Կեդրոնական Վարչական Ժողով
Նիւ Եորք, 10 Սեպտեմբեր 2009